

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԱՄՍՕՐԵԱՑ ԼՈՒՐԵՐ

Անցեալ Սեպտեմբեր ամսուան ընթացքին, Ս. Աթոռայ ԳՅՈՐԷՑ Ժողովը ինը անգամներ ի նիստ զուսմարուեցաւ իրրի վարչական Մարմին, Առնճ. Գիւր. Ահեմանը երկու անգամ, իսկ Աւսում. Խորհուրդը մէկ անգամ, իւրաքանչիւրը զբաղեւ իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով:

● Կիր. 1 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ, ըստ սովորութեան, Ս. Թարութեան տաճարի վերնայարկ մեր մատարան ճրարխաւար Ս. Աստուածածանի սեղանին առջև. տեղւոյն փաշարէրէսութեան հետեւանք անխարմարութեանց պարտաւար ճարող խոտուեցաւ:

● Դշ. 3 Սեպտ. — Յովակիմայ եւ Աննայի տունին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գուսի Գրեղմանին տաճարի մէծ սանգուսիի կողքին սաւանդարար յարգուած աննոց գերեզմանի հայապատկան սեղանին վրայ, ի ներկայութեան Միաբանութեան:

— Պատր. Փախանորդ Տ. Մկրտիչ Սրբազան, ընկերակցութեամբ Տ. Կիւրեղ եւ Աւագ Յարգման Տ. Հայրիկ վարդապետներու, յանուն Ս. Պատրիարք Հօր, ներկայ դառնուեցաւ Գեղիկայի ողբացեալ Թադուհայն հոգեհանգստեան պատարագին, Ֆրանչիսկանց եկեղեցիին մէջ:

● Դշ. 4 Սեպտ. — Տ. Սերովբէ եւ Տ. Ասողիկ վարդապետներ զացին Նազարէթ:

● Եր. 7 Սեպտ. Տ. Շաւառշ Վրդ. մեկնեցաւ Հայքա, ստանձնելու տեղւոյն Հոգեւոր Հովիտութեան պաշտօնը:

— Տօթթ. եւ Տիկին Նազարեան, Աղեքսանդրիայէն, այցելեցին Ս. Պատրիարք Հօր:

● Կիր. 8 Սեպտ. — Գիւտ Գոստայ տունին առթիւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Գրեղման Ս. Կուսին: Պատարագիչ Տ. Հայկազուհի Վրդ. ճարողեց ըստ պատշաճի առաւել, խորհրդածութեան առարկայ ընելով Գիթնիմանի պարտեղը, ուր է Ս. Կուսին գրեղմանը, իրրի վայր աղօթից Յիսուսի, եւ մեր Փրկչին մայրը ներկայացնելով իրրի աղօթանուէր եւ բարեպաշտ ընտանիքի մը միակ զաւակը, խօսեցաւ աղօթքի

օգտակարութեան մասին, ցուցնելով զայն իրրի նախապայման հոգեւոր կեանքի, եւ միջոց՝ առաւածամեծի հաղորդակցութեան շնորհիւ՝ փրկութեան առաւելորդութիւն:

● Եր. 14 Սեպտ. — Տիրապետած հանդիսաւորութեամբ կատարուեցաւ յուղարկաւորութիւնը որը Սերբ Մարտիրոսեանի, զոր երէկ իրկերեւանցիութեան յայաննաւ էր իր նախկին ընկերներէն ուրիշ որը մը: Ս. Պատրիարքը, որ կը նախագահէր, խօսեցաւ զամբանական մը ըմբար է եղբայր քո՛ւ բնաբանին վրայ:

— Տ. Տիրան եւ Տ. Սերովբէ վարդապետներ, սարկաւազներ եւ ժառանգաւորներ վերադարձան գալիլիական արձակուրդէն:

● Կիր. 15 Սեպտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թարութեան:

● Ուր. 20 Սեպտ. — Իրլանտայի անկլիքան արքեպիսկոպոսը, որ Նրուստայէմ էր եկած ուխտաւորաբար, այցելեց Ս. Պատրիարք Հօր, որ Նորին Բարձր Սրբազանութիւնը պատուով ընդունեց պատրիարքարանի մեծ գահինէն մէջ:

— Ս. Պատրիարք Հօր այցելեցին Նոյեպէտ Վենետիկ Միխիլիսեաններէն Հ. Խանպէտեան եւ Հ. Մանուէլ վարդապետներ:

● Եր. 21 Սեպտ. — Ս. Պատրիարքը Իրլանտայի արքեպիսկոպոսին զնաց փոխադարձ այցելութեան:

● Կիր. 22 Սեպտ. — Մայր Տաճարին մէջ, որ մատուցուեցաւ Ս. Պատարագը, ճարողեց Տ. Հայրիկ Վրդ. ըստ առաւել պատշաճի, զնամենայն ինչ ճարաւք գործեցաւ զայն, զի խից տայ լսելու համերց խօսելու բնաբանին վրայ: Բացատրեց Թէ քրիստոնէական բարոյականին շնորհիւ էր որ մարդը տիրացաւ զԱստուած լսելու եւ Աստուծոմէ լսուելու, եւ, հաւասարութեան սկզբունքին հետեւանքով՝ մարդիկ տիրացան զիրար լսելու եւ իրարմէ լսուելու առանձնաշնորհութեան:

● Բշ. 23 Սեպտ. — Տ. Հայկազուհի եւ Տ. Տիրայր վարդապետներ եւ Գ. Նուրեան Քեթիկէմ զացին, Հնադիտական վարչութեան կառավարական պաշտանակային հետ միասին տեղական քննութեան մը գործով:

— Աւստրալիայի անկլիքան եպիսկոպոսներէն մին, որ Նրուստայէմ էր եկած, այցելեց Ս. Պատրիարք Հօր:

● Եշ. 26 Սեպտ. — Դպրոցական վերամուտի առթիւ պատրաստութիւններն սկսան: